Նոյն Զաքարիան ՈԿԳ (=1214) թուին ազատելով Խծկոնից վանքը այլազգիներից, կալուածական նուիրաբերութիւններ է անում «առաջնորդութբ Դաւթի որդոյ Տոթըռկա». արձանագրութիւնը գտնւում է Ս. Սարգսի հարաւային պատին, որ մէջ ենք բերում այստեղ ամբողջութեամբ, նմանահանութեան հետ (պատկ. 12, միջին կամարի վերևի արձանագր.)։

1. ⁚ Կամաւն այ։
2. ։ Ի ՈԿԳ։ Թվաբերութեանս
3. Հայոց ես Զաքարէ ամիր սպ
4. ասալար Հայոց և Վրաց որդի Սար
5. գսի ազատեցի զսբ ուխտս զայս իմո
6. վ արեամբս ի յայլազգեաց եւ ետու ի
   սբ Սար
7. գիս զվասակափող Մչկոդբիր . . .
8. եւ այգի մի ի Բոգրան եւ շինական
   մին ի գ
9. իւղս յիշատակ հոգոյ իմոյ եւ յարեւշատ
10. ութի հարազատ որդոյ իմոյ Շահանշահի
11. եւ եղբաւր իմոյ Իւանէի հայր Յով-
    հաննէս եւ ա
12. յլ միաբանքս հաստատեցին զսբ Սարգսի
13. զաւագ բեմբն անխափան պատարագ
    ատնել ինձ առաջ (միացած)
14. նորդութբ Դաւթի որդոյ Տոթըռկայ
    արդ եթէ յիմ
15. ազգականաց եւ կամ յաւտարաց եւ
    կամ հարանց
16. զիմ գյիշատակս խափանէ եւ զվա-
    սակափաւղ յ
17. այս սրբոցս հանէ։ զաւձին։ զԿաենին։
    զՈւզայլին։
18. զխաչահանուաց զանէծսն առցէ։ յմը։
    իցն ի սբ
19. երրորդութենէն մի գտցէ ողորմութի։
    ամէն։

Այս երկու արձանագրութիւններից երևում է, որ Դաւիթ Տոթռկանցի իշխանութիւնը և կալուածները պէտք է մասամբ Հաղբատի և մասամբ Խծկոնից վանքի կամ Տեկորի շրջանում լինէր. աւելացնենք, որ Բռնաւորի նուիրաբերութիւնները աւետարանով և այգւով «որ ի Մրեն» այդ են մատնանշում։ Բայց մենք ունինք ուրիշ ապացոյց ես. Սանահնի վանքում «Ճեմարան» կոչուած ընդարձակ սրահի հարաւային պատին, ուր դէպի մեծ տաճարի գաւիթը տանող դուռն է. գտնւում է նոյն Դաւիթ իշխանի, Տոթռկա որդու մեծ արձանագրութիւնը, որ նոր լոյս է սփռում խնդրի վերայ. նա յայտնում է, որ ՈՀԱ (=1222) թուին գնել է «զՈռնակ զոմուց կէսն եւ շինական մի Հալալաչինի...»են։ Այստեղ յիշուած Ոռնակ գիւղը այժմ էլ նոյն անունով գտնւում է Հաղբատի և Սանահնի մէջ, հին եկեղեցու մնացորդներով, և եթէ «Հաղբ։» անունը Զաքարիայի արձանագրութեան մէջ «Հաղբատ» պիտի կարդալ, նշանակում է Դաւիթը տեղական իշխան էր Հաղբատի և Սանահնի մէջ ընկած մի երկրամասի։ Հաղբատի մեծ իշխանները Մահկանաբերդի Արծրունիք էին, որոնց յայտնի ներկայացուցիչներ են Ամիր Քուրդ, Սաթուն աթաբէգ են, որոնց տոհմը կարևոր դեր է կատարում Հայոց և Վրաց պատմութեան մէջ ԺԲ. դարու կէսերից մինչև ԺԳ.ի վերջերը։

1. + Թու ՈՀԱ. Ես Դաւիթ իշխան որդի
   Տոթռկա է (?) գնեցի զՈռնակ
2. զոմուց կէսն և շինական մի Հալալա-
   չինի մչակն լման
3. ուխ եւ զսպիտակ(1) նշան և բ։ չար-
   ջառ ընծայեցի յսծ
4. ածինանե առաջնորդ սբ ուխտիս տր
   Յոհաննանե ւ միաբանից սոր
5. զսբ Գրիգորի տաւնն որ հետն դիտական
   զշաբաթն եւ զկիրակէն զեկեղն
6. ցիքս զշաբաթնար ինձ Դաւթի եւ
   Վարձկա եւ զկիւրակ
7. է աւրն Սարգսի եւ Տերերարքին արդ
   որ զմեր ընծայս հանէ յ
8. այսմ եկեղեցոյս Յուդայի և Կայենի մասնակից է զի եւ
9. մեր մեղացս տէր է առաջի քի ամէն։

Այստեղ յիշուած անուններից Տէրպարիքը կ'տեսնենք կրկնուած նոյն Դաւթի Խծկոնից վանքում թողած մի արձանագրութեան մէջ, իսկ Վարձիկն ու Սարգիսը

---

(1) Երկրորդ տողի վերջին եւ երրորդի առաջին բառերը պարզ չեն եւ միտք չեն դուրս գալիս. արդեօ՞ք «զսպիտակ»։ «զ. սպիտակ» պիտի կարդալ. շատ չնչին գումար կ'լինի այդ դէպքում մի իշխանի կողմից նուիրելու «զսպիտակ նշան» պէտք է արծաթի խաչ հասկանալ։ Զալալ. Ա. 19 չի կարդացել։